# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԿ-Ի ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ

Օգոստոսի 25-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի նորանշանակ ներկայացուցիչ Դամթյու Դեսալեյնին:

Ողջունելով պրն. Դեսալեյնի այցը հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունը հաջողություն մաղթեց նրա ստանձնած պատասխանատու եւ մարդասիրական առաքելությանը: Վեհափառ Հայրապետը նաեւ գոհունակություն հայտնեց ՄԱԿ-ի գրասենյակի եւ Մայր Աթոռի միջեւ ձեւավորված համագործակցության համար, որի շնորհիվ համատեղ իրականացվել են բնապահպանական մի շարք ծրագրեր:

Մասնավոր անդրադարձ կատարվեց փախստականների խնդիրներին: Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատանք հայտնեց այն զորակցության համար, որ ՄԱԿ-ի փախստականների հարցերով ներկայացուցչությունը ցուցաբերում է փախստականների ընտանիքներին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը պրն. Դեսալեյնին ներկայացրեց Հայոց Եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, ինչպես նաեւ Եկեղեցու ներկայիս բազմակողմ գործունեությունը սոցիալական ոլորտում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր պետությամբ ստեղծված ծիսական հանձնախումբը՝ կազմված Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության եւ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչներից, օգոստոսի 16-17-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր անդրանիկ ժողովը:

Հայ Եկեղեցու ծիսական հանձնախմբի աշխատանքներն ուղղված են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առաքելության առավել ամրապնդմանն ու արդյունավետ իրագործմանը, ծիսաարարողական կյանքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարմանը եւ ծիսական բարեկարգությանը:

Ծիսական հարցերի հանձնախմբի անդամներն են՝

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Օհանյանը (համապտենապետ).

Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը (համապտենապետ).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը.

Տ. Գեղամ արքեպիսկոպոս Խաչերյանը.

Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը.

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը.

Տ. Գրիգոր ծայրագույն վարդապետ Չիֆթճյանը.

Տ. Վահան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը:

Հանձնախումբը քննարկեց Մկրտության եւ Դրոշմի արարողության միօրինակ տեքստի պատրաստության, խորհրդի հետ առնչված կանոնական-բարեպաշտական ավանդույթների կանոնակարգման հետ կապված հարցեր: Որոշվեց հետագա աշխատանքների համար որպես հիմք ընդունել Մկրտության եւ Դրոշմի արարողությունների վաղագույն բնագրերը, ինչպես նաեւ ներկայիս գործածության մեջ գտնվող տեքստերը:

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԾԻՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ**

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԺՈՂՈՎԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ եւ բարձր փնօրհնությամբ 2005 թ. ստեղծված կանոնական հանձնախումբը սույն թվականի օգոստոսի 18-19-ը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարեց իր հերթական ժողովը:

Համապեղ հանձնախմբի նպատակն է իր աշխատանքով նպաստել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սրբազան առաքելության առավել ծաղկմանը եւ ներքին միասնականության ամրապնդմանը, Հայ Եկեղեցու կյանքում առկա կանոնական խնդիրների քննությանն ու լուծումների առաջադրմանը:

Կանոնական հանձնախմբի անդամներն են՝

Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը (ատենապետ).

Տ. Օշական արքեպիսկոպոս Չոլոյանը (ատենապետ).

Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը (ատենադպիր).

Տ. Նարեկ եպիսկոպոս Ալեմեզյանը (ատենադպիր).

պրիար Ջիմ Գալուստյանը.

պրիար Արսեն Դանիելյանը.

պրիար Նիկոլայ Հովհաննիսյանը.

պրիար Տիգրան Ջինբաշյանը:

Օգոստոս 18-ին, Վեհարանում ժողովի մասնակիցներին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը, Հայրապետական իր օրհնությունը բերելով ժողովականնե-